# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

| | |
|---|---|
| Վարկի անվանում, նպատակ, արժույթ | <<ԱՎՏՈԳՐԱՎՈՎ-ՊԱՐԶ>> - Սպառողական շարժական գույքի գրավով, ՀՀ դրամ |
| Վարկի նվազագույն - առավելագույն գումարներ | **400.000 - 5.000.000** ՀՀ դրամ |
| Վարկի առավելագույն ժամկետ | **4** տարի |
| Տարեկան անվանական տոկոսադրույքի չափ, տեսակ, հաշվարկման կարգ | **18,7%**<br>*Վարկի անվանական տոկոսադրույքը պայմանագրի գործողության ընթացքում մնում է անփոփոխ: Տոկոսագումարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ՝ օրական կտրվածքով, փարվա օրացուցային օրերի քանակով:* |
| Տարեկան փաստացի տոկոսադրույք | **21,47 - 23,93%** |

***ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ! Վարկի տոկոսները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը՝ տոկոսագումարները և վարկի տրամադրման (այդ թվում՝ երրորդ անձանց վճարվող) և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի կարգը կարող եք գտնել մեր կայքում, հետևյալ հղմամբ՝*** http://bless.am/wp-content/uploads/documents/thash.pdf:

| | |
|---|---|
| Վարկի տրամադրման հետ կապված Ընկերության կողմից սահմանված ծառայության վճարներ | Վարկի տրամադրման վճար – վարկի գումարի **1,3%**<br>*Վճարները գանձվում են միանվագ, մինչև վարկի տրամադրման պահը:* |
| Վարկային պարտավորությունները չկատարելու համար կիրառվող պատասխանատվության միջոցներ | Վարկի մայր գումարը չվճարելու դեպքում – տարեկան **24%**<br>Տոկոսագումարը չվճարելու դեպքում – օրական **0,13%** |
| Վարկի վաղաժամկետ մարում | Վարկի վաղաժամկետ մարումը թույլատրվում է, տույժեր և տուգանքներ չեն սահմանվում: *Վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում են վարկառուի վարկավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող Ընկերության եկամուտը ձևավորող վճարները:* |

Ամփոփագրի հրապարակման ամսաթիվը՝ 18.12.2023թ. *Ամփոփագրում նշված պայմանները Ձեր դիմելու օրվա դրությամբ կարող են փոփոխված լինել: Մանրամասների և վարկի ամբողջական պայմանների համար դիմեք Ընկերության վարկային մասնագետին՝ /010/22-52-52 հեռախոսահամարով, info@bless.am էլ. հասցեով կամ Ընկերության տարածքում:*

***ԶԳՈՒՇԱՑՈՒՄ !***

*- Ձեր կողմից պարտավորությունները (այդ թվում՝ սահմանված ժամկետներում վարկի գումարը և տոկոսագումարը չմարելու) չկատարելու կամ թերի կատարելու դեպքում Գրավի առարկա գույքը կարող է Օրենքով սահմանված կարգով բռնագանձվել և իրացվել,*

*- Գրավի առարկայի իրացումից ստացված գումարը վարկի պարտքը չծածկելու դեպքում պարտքի մնացած գումարը կարող է մարվել Ձեր այլ գույքի բռնագանձման և իրացման հաշվին,*

*- Ձեր կողմից պարտավորությունները չկատարելու կամ թերի կատարելու դեպքում Վարկատուն 3 աշխատանքային օր հետո այդ տվյալները ուղարկում է Վարկային բյուրո, որտեղ ձևավորվում է Ձեր վարկային պատմությունը: Դուք իրավունք ունեք տարեկան մեկ անգամ անվճար ստանալ Ձեր վարկային պատմությունը: Վատ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:*

| | |
|---|---|
| Վարկի ապահովման միջոցներ | Գրավ՝ շարժական գույք, որն Ընկերության համար ունի բավարար լիկվիդայնության /իրացվելիության/ աստիճան.<br>Որոշ դեպքերում կարող են պահանջվել վարկի երաշխավորներ: |
| Վարկի գումար/գրավի գրավադրման արժեք առավելագույն հարաբերակցություն | 60% |

| | |
|---|---|
| Վարկի ստացման, այդ թվում՝ գրավադրման հետ կապված ծախսեր, որոնք ենթակա են վճարման երրորդ անձանց | Գրավ դրվող գույքը ենթակա է պետական գրանցման, որի հետ կապված անհրաժեշտ ծախսերը կատարվում են հաճախորդի կողմից:<br>Գրավի առարկան ապահովագրելը պարտադիր պահանջ չէ:<br>Վերը նշված ծախսերի արժեքները ներկայացված են մեր կայքում, հետևյալ հղմամբ՝ [http://bless.am/wp-content/uploads/documents/cax.pdf](http://bless.am/wp-content/uploads/documents/cax.pdf) |
| Վարկի և տոկոսագումարների վճարման եղանակ | Վարկի մարման եղանակ – ամենամսյա (անուիտետային)<br>Տոկոսագումարների վճարման եղանակ – ամենամսյա |
| Վարկի տրամադրման եղանակներ | Միանվագ կամ փուլային, անկանխիկ |
| Պարտքի գանձման հերթականություն | Տույժեր, տոկոսագումարներ, վարկի մայր գումար |
| Մտածելու ժամանակ | Վարկառուն իրավունք առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու վարկային պայմանագիրը՝ դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ վճարելով վարկի օգտագործման համար տոկոսներ, հաշվարկված վարկային պայմանագրում նշված տարեկան փաստացի տոկոսադրույքով: |
| Քաղվածքների տրամադրման կարգ ու ժամկետներ | Վարկի քաղվածքները (կրկնօրինակները), այլ տեղեկությունները տրամադրվում են անվճար, ամսական պարբերականությամբ, հաճախորդի նախընտրած եղանակով |
| Հաճախորդի հետ հաղորդակցման կարգ | Հաճախորդի ընտրությամբ՝ փոստով, էլ.փոստով, Ընկերության գրասենյակում: Էլեկտրոնային եղանակով հաղորդակցումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է Ձեզ 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկից և ապահովում է գաղտնիություն |
| Վարկի ձևակերպման վայր | Ընկերության գլխամասային գրասենյակ, մասնաճյուղեր |
| Որոշում ընդունելու և վարկը տրամադրելու ժամկետներ | Վարկի տրման (մերժման) որոշման կայացման ժամկետ – 2 աշխատանքային օր /պահանջվող ամբողջ փաստաթղթերը ներկայացնելուց հետո/,<br>Որոշման մասին Հաճախորդին տեղեկացնելու ժամկետ – 1 աշխատանքային օր /որոշման կայացումից հետո/,<br>Վարկը տրամադրելու ժամկետ - 5 աշխատանքային օր /հաճախորդի կողմից վարկի պայմաններին համաձայնելուց հետո/ |
| Վարկի տրամադրման դրական գործոններ | - ներկայացված հայտը համապատասխանում է սահմանված պայմաններին ու պահանջներին<br>- Ընկերության համար ընդունելի է հաճախորդի վարկային պատմությունն ու վարկային ծանրաբեռնվածությունը<br>- Ընկերության համար ընդունելի է վարկի ապահովման միջոցը |
| Վարկի մերժման գործոններ | - ներկայացված հայտը չի համապատասխանում սահմանված պահանջներին<br>- հաճախորդի բացասական վարկային պատմությունը<br>- հաճախորդը, Ընկերության կարծիքով, խիստ ծանրաբեռնված է վարկային և այլ անձանց նկատմամբ պարտավորություններով<br>- Ընկերության համար ընդունելի չէ վարկի ապահովման միջոցը<br>- վարկի իրական շահառուն այլ անձ է |
| Պահանջվող նվազագույն փաստաթղթերը, դրանց ներկայացման կարգ ու ժամկետներ | -Հաճախորդի անձնագիր /նույնականացման քարտ/ և ՀԾՀ (սոց. քարտ),<br>-Հաճախորդի վարկային պատմությունը նկարագրող փաստաթղթեր,<br>-Գրավադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր:<br>Փաստաթղթերը ներկայացվում են վարկային հայտի հետ միաժամանակ:<br>Ընկերությունը կարող է իր ներքին իրավական ակտերով և/կամ <<Փողերի |

| | |
|---|---|
| | **լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով հաճախորդից պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ բանավոր տեղեկություններ:** |

***Ընկերությունը նախքան վարկային պայմանագրի կնքումը հաճախորդին տրամադրում է Անհատական թերթիկ՝ համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» Կանոնակարգ 8/05-ի»:***

***ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ! ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՁԵԶ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵԶ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ***

***«ԲԼԵՍՍ» ՈՒՎԿ ՍՊԸ-ն վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից***